



Հովհաննես Թումանյան

Մասունցի Դավիթ

4

Բ ՄԱՍԸ

1

Ընկավ Մելիքն ամբարտավան ու պատերազմն արյունոտ:
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց հայոց առավոտ:
Գլտավ կորցրած հանգիստն էլ ետ ամենն իրեն հարկի տակ,
Վեր բարձրացավ կրտուրներից ծուխը բարդ-բարդ, կապուտակ:
Կըտրիճ տըղերք գենքի տեղակ առան մանգաղ, գերանդին,
Զրը՛նգ, գրը՛նգ, զըվարթ ձենով գործը թընդաց մեր հանդին:
Դը՛նք, հա դըր՛նք, թըմբուկ զարկին, գոռնեն հընչեց զիլ, ուժեղ,
Քեֆ, կեր ու խում, պար ու խընդում, ու հարսանիք ամեն տեղ:
Ապրի Դավիթ, , որ մեզ տըվավ ուրախ օր,

Իրեն կանանչ կարմիրն էլ թող էսպես կապենք բախտավոր...
Ու նըշանեց Ձենով Օհան, Դավթին արավ տուն ու տեղ,
Աղջիկ ուզեց արժանավոր, թագավորի զարմ ու ցեղ:

Խըլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց նրբան կին,
Չըքնաղագեղ ու փահիկան էն Չըմըշկիկ Սուլթանին:

2

Բայց թե աղջիկ կուգես չըքնաղ, անպարտելի փահիկան:
Արի՛, գընանք Կապուտ Բերդի թագավորի աղջրկան:
Խանդութ խանո՛ւմ... հուրի ասա, մի աննըմա՛ն, մի անտե՛ս...
Խանդութ խանո՛ւմ... հալվում էին սրբուերն ամեն մոմի պես:
Օխտը տարի քառսուն հըսկա թագավորներ աժդահակ

Գուրգերն առած նըստած էին նրբա բերդի պատի տակ.
Բայց գեղեցկուհին իր ամրոցում ահագին,
Ու չէր գարկում կարմիր խնձորն և ոչ մեկի թիկունքին:

3

Ձենը ելավ, աշխարք ընկավ, գընաց, հասավ Կապուտ Բերդ,
Թե մեծ կըռվում հաղթեց Դավիթ Մըսրա տիրոջն անհեթեթ:
Էս հաղթական լուրի վըրա քանդվեց սիրտը սիրունի.
Ա՛խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լիներ երանի...
Երնեկ տըվավ՝ խելքը թըռավ, ուշքը թըռավ դեպ Սասում,
Դավիթն է միշտ մըտքի միջին, Դավիթն է միշտ երագում:

4

Երկու աշուղ կանչեց Խանդութ, ոսկի տըվալ լիառատ,

Գնացե՛ք, ասալ, Սասնա քաղաք, Ջոջանց տունը բազմահաղթ,
Իմ գովքն արեք Դավթի առաջ, սերըս սիրտը ձրգեցեք,

Ու կըտրեցեք աչքի քունը, սըրտի հանգիստն կըտրեցեք:
Ապա ինձնից բարով արեք, ասեք՝ մինչ ե՞րբ մընամ քեզ,
Ձիավորված < . . . >թըռած՝ ե՞րբ պիտի գաս ինձ տանես...
Սագներն առան աշուղները ու հողից հող < . . . >,
Սագ անելով եկան հասան Սասնա քաղաք, Ջոջանց տուն:
Բարով տըվին շենքում նստած էն ջոջ Ձենով Օհանին,
Է՛ս է, ասին, աստվածապահ Ջոջանց տունը :
Է՛ս է, ասալ Ձենով Օհան, ի՞նչ եք ուզում դուք Սասուն:

Մենք < . . . >, աշուղներ ենք, Դավթին կուգենք դյուցազուն:
Խանդութ խանում դըրկել է մեզ իր գովքն անենք Դավթի մոտ,
Պատմենք անտես էն սիրունի անքուն սերը ու կարոտ:
Աստված ինքը թող շեն պահի Ջոջանց տունը փառավոր,
Շեն պահողին ապրած պահի (էն քաջ Դավթին) <...>:
Ջոջանց պարծանք քաջ Դավիթը ո՞րն է արդյոք, բարեկա՛մ:
Քաջ Դավիթը, որ լըսել եք, ես եմ, ասալ, հենց որ կամ.
Ինչ որ Դավթին պիտի ասեք, իմ առաջին ասեք դուք:
Էսպես ասալ Ձենով Օհան, աշուղները < . . . >
Նըստոտեցին ծալապատիկ, < . . . > ,

Ու էրվելով, օրորվելով սագներն առան ծընկներին:
Օրինյալ աստված, տեր բարերար,
Քու գորքն է շատ, քու գործն արդար.
Դու պահապան կըտրիճ Դավթին,
Կըտրիճ Դավթին, իր մուրատին.
Իրեն մուրատն իրեն սըրտում,
Իրեն սըրտում Կապուտ Բերդում...

Օրինյալ աստված, բանդ ու բարիդ.
Ամենը սուտ, դու ճըշմարիտ:
Դու, որ < . . > ըսկըգբանե

Ըստեղծել ես < . . . >

Խանդութ խանում Դավթի համար,
Դու արժանի անես իրար:
Վա՛յ քու տունը քանդվի, Խանդո՛ւթ,
Վա՛յ , անգո՛ւթ,
Դու քու անհաս աշտարակում,
Աշխարհ ամեն քու կըրակում.

< >

Հասակն ասես՝ շիտակ, Դավի՛թ, դրախտի միջում կանգնած նոճին,
Ա՛խ, կանգնած նոճին.

Ծըծերն ասես՝ ջուխտակ, Դավի՛թ, գանգակներ են ծոցի միջին,
Ա՛խ, ծոցի միջին.

Աչքերն ասես՝ ծով են, Դավի՛թ, ու ցոլան աստղ ու արև,
Ա՛խ, աստղ ու արև.

Ունքերն ասես՝ սև են, Դավի՛թ, սև ամպերը ծովի վերև,
Ա՛խ, ծովի վերև.

Ճակատն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, էն նոր ձընած դաշտը սերսուփ,
Ակոներն ասես՝ գերմակ, Դավի՛թ, լա< լ > մարգարտի շարոց են սուրբ.
Ծամերն ասես՝ ճոխծամ, Դավի՛թ, կրունկն են ծեծում հողին հավսար,
Վիզը ասես՝ ճոճան, Դավի՛թ, շողման կլափն ու շուրթը լար...